ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱՐԵԿ ՍԱՐԳՍԻ

ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ը.00.02- «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սարգիս Լևոնի Ղանթարջյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Սերգեյի Ավետիսյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Արման Ալբերտի Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. դեկտեմբերի 27-ին, ժամը 15:00-ին՝ Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան փ. 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 26-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Վենչուրային գործարարությունը, հանդիսանալով ձեռնարկատիրական գործունեության տեսակներից մեկը, մեծ նշանակություն ունի ժամանակակից շուկայական հարաբերությունների համակարգում և ուրույն տեղ է զբաղեցնում ոչ միայն զարգացած, այլև զարգացող երկրների տնտեսական համակարգերում: Ձեռնարկատիրության այս տեսակը Հայաստանի համար կարող է դառնալ տնտեսական զարգացման, հանրապետության արտադրական ներուժի վերականգնման, գիտատեխնիկական առաջընթացի խթանման, ինչպես նաև դրա արդյունքները տնտեսության մեջ ներդնելու կարևորագույն գործոն:

Հայաստանի Հանրապետությունում ամենատարբեր քննարկումներում շուկայական բարեփոխումների արդյունավետությունը հիմնականում կապվում է վենչուրային ձեռնարկատիրության զարգացման և ինովացիոն ակտիվ քաղաքականության իրականացման անհրաժեշտության հետ: Սակայն, որպես կանոն, այդ քննարկումները տրամաբանական շարունակություն չեն ստանում և գործնական քայլերի չեն վերածվում: Այդ ուղղությամբ միայն վերջերս են սկսվել որոշ պետական ծրագրերի մշակման և դրանց կենսագործման գործընթացները, ինչը, ըստ էության, կարող է դառնալ հիմք պետական մակարդակով համապատասխան քաղաքականության իրականացման համար: Միևնույն ժամանակ, հարկ է նաև նշել, որ վենչուրային գործարարության խթանմանն ուղղված քաղաքականությունը, հանդիսանալով համեմատաբար նոր երևույթ ՀՀ պետական կառավարման համակարգի համար, ունի համալիր հետազոտությունների, խորը վերլուծությունների և գործնական քայլերի կարիք:

Այս առումով հրատապ է դառնում հանրապետությունում վենչուրային ձեռնարկատիրության այնպիսի մոդելի ստեղծումը, որը թույլ կտա հնարավորինս արագ լուծել առկա հիմնահարցերը, իսկ ապագայում դառնալ համաշխարհային տնտեսական համակարգի իրավահավասար և արդյունավետ սուբյեկտ: Այդպիսի պահանջների կարող է բավարարել հիմնականում արտադրական կողմնորոշում ունեցող ինովացիոն ձեռնարկատիրությունը, որի բնականոն զարգացման և արդյունավետության բարձրացման համար հանրապետությունում դեռևս առկա են որոշ նախադրյալներ: Հարկ է սակայն նշել, որ վենչուրային ձեռնարկատիրության այդպիսի ներուժը ներկայումս մնում է ոչ միայն չօգտագործված, այլև չպահանջված:

Անցումային շրջանում, ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հետազոտողներ որոշակի գիտական աշխատանքներ են կատարել ձեռնարկատիրության հիմնահարցերի ուսումնասիրության ուղղությամբ, սակայն ինովացիոն գործունեության, վենչուրային ձեռնարկատիրության արդյունավետության, «պետություն - գիտություն - վենչուրային ձեռնարկատիրություն» հարաբերությունների կարգավորման և գործարարության խթան այլ հարցերի շուրջ, ըստ էության, գիտական լուրջ

հետազոտություններ չեն իրականացվել: Ներկայումս Հայաստանում վենչուրային ձեռնարկատիրության և ինովացիոն գործունեության տեսամեթոդական հիմքերի ձևավորման, արտադրական ոլորտում վենչուրային ձեռնարկատիրության համար բարենպաստ միջավայրի ստեղծման, գործունեության այդ տեսակի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև գիտության հետ դրա կապերի խորացման հիմնախնդիրները բավարար լուսաբանված չեն: Այդ առումով ներկայացվող ատենախոսության շրջանակներում փորձ է արված համապատասխան հետազոտությունների միջոցով բացահայտել հանրապետությունում վենչուրային ձեռնարկատիրության զարգացման ուղիները: Նշված հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը և կարևորությունն էլ պայմանավորել են ատենախոսության թեմայի ընտրությունը, աշխատանքի կառուցվածքը, առաջ քաշված խնդիրների հետազոտման խորությունը և վերջին հաշվով՝ թեմայի ***արդիականությունն ու հրատապությունը:***

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ-ում վենչուրային ձեռնարկատիրության տեսամեթոդական և գիտագործնական հիմնախնդիրների ուսումնասիրության հիման վրա համապատասխան միջավայրի ձևավորման հայեցակարգային և ռազմավարական մոտեցումների ու կոնկրետ միջոցառումների մշակումն է, որին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ ***խնդիրները***՝

- բացահայտել վենչուրային ձեռնարկատիրության տնտեսագիտական էությունը, բովանդակությունը և հիմնական բնութագրերը, ինչպես նաև դրանց տեսական և գործնական առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ինովացիոն գործունեության, նորարարությունների ներդրման և ինովացիոն բիզնեսի յուրահատուկ կողմերը և վենչուրային ձեռնարկատիրության հետ դրանց անմիջական կապերը,
- վերլուծել ՀՀ-ում վենչուրային ձեռնարկատիրության զարգացման հեռանկարները և այդ ուղղությամբ վարվող պետական քաղաքականությունը՝ հատուկ ուշադրություն կենտրոնացնելով այդ քաղաքականության սկզբունքների և մոտեցումների վրա,
- բացահայտել Հայաստանում վենչուրային ձեռնարկատիրության և ինովացիոն գործունեության միջավայրի հիմնական բնութագրերը և պայմանները,
- ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում ընդունված և մշակման փուլում գտնվող՝ ինովացիաների և վենչուրային ձեռնարկատիրության կարգավորման իրավական հիմքերը և ծրագրային փաստաթղթերը,
- մշակել ՀՀ-ում վենչուրային ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգային և ռազմավարական մոտեցումներ՝ հաշվի առնելով ինչպես միջազգային փորձը, այնպես էլ հանրապետության առանձնահատկությունները,
- մշակել համապատասխան միջոցառումներ, մեխանիզմներ և մոտեցումներ՝ ՀՀ վենչուրային ձեռնարկատիրության զարգացման, դրա ներդրումային, գործարար և տեղեկատվական միջավայրերի, ինչպես նաև օրենսդրական հիմքերի կատարելագործման ուղղությամբ:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը հանդիսացել է հանրապետության ձեռնարկատիրական գործունեության վենչուրային և ինովացիոն հատվածները, իսկ ուսումնասիրության առարկան՝ վենչուրային ձեռնարկատիրության և ինովացիոն գործունեության միջավայրը, այն բնութագրող գործոնները, այդ ոլորտներում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև դրանց լուծման ուղիները:

Հետազոտության տեսամեթոդական հիմքերը և տեղեկատվական ապահովումը: Հետազոտության համար տեսական և մեթոդոլոգիական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան գիտնականների ու մասնագետների՝ շուկայական վերափոխումներին, անցումային տնտեսություններին բնորոշ հիմնահարցերին և վենչուրային ձեռնարկատիրության զարգացման տարբեր հայեցակետերին նվիրված ուսումնասիրությունների արդյունքները, իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, տարբեր նախարարությունների ու գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված պաշտոնական տվյալները և նյութերը, հանրապետության և արտասահմանյան երկրների օրենսդրական ակտերը, գիտական կազմակերպությունների և առանձին գիտնականների կողմից հրապարակված հետազոտությունները: Ուսումնասիրությունների ընթացքում կիրառվել են համեմատական, գործոնային և համակարգային վերլուծությունների, գիտական աբստրակցիայի և վիճակագրական խմբավորումների մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և դրանց նորույթը:

Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- հիմնվելով վենչուրային ձեռնարկատիրության ասպարեզում առկա արտասահմանյան փորձի վրա և ելնելով ՀՀ առանձնահատկություններից՝ մշակվել է Հայաստանում ինովացիոն նախագծերի փորձաքննության և դրանց արդյունավետության գնահատման ամփոփ սկզբունքներ և չափանիշներ, որոնք թույլ են տալիս բացահայտել ինովացիոն բնույթի ներդրումային ծրագրերի նախընտրելի տարբերակներ,
- վենչուրային ձեռնարկատիրության հիմնական նպատակների ու խնդիրների բացահայտման, տվյալ համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ու ելակետային նախադրյալների ապահովման, վենչուրային ներդրումային գործուն մեխանիզմների ստեղծման, ինչպես նաև այդ համակարգի կառուցվածքային բաղադրիչների և դրանց գործունեության սկզբունքային ուղղությունների որոշման նպատակով մշակվել են վենչուրային ներդրումային քաղաքականության հայեցակարգային և ռազմավարական մոտեցումներ,

- վենչուրային ձեռնարկատիրության և ինովացիոն գործունեության օրենսդրական կարգավորման կատարելագործման նպատակով «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին», «Շահութահարկի մասին», «Ազատ տնտեսական գոտիների մասին» և ՀՀ մի քանի այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար մշակվել են կոնկրետ առաջարկություններ,
- Հայաստանում գործարար և ներդրումային միջավայրերի բարելավման և հանրապետությունում վենչուրային ձեռնարկատիրության զարգացման պետական համակարգի ձևավորման նպատակով առաջարկվել են կոնկրետ միջոցառումներ՝ այդպիսի գործարարությամբ ենթադրվող տեղեկատվական ցանցի ստեղծման, ոլորտում իրականացվող գործառույթների արդյունավետության բարձրացման, վենչուրային ձեռնարկատիրության հարակից ոլորտների գործունեության համակարգվածության ապահովման և մակրոտնտեսական բարենպաստ դաշտի ձևավորման ուղղությամբ:

Ստացված հիմնական արդյունքների ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ դրանք ստացվել են առաջին անգամ կամ չեն կրկնում այլ հետազոտողների կողմից համանման հարցերի ուսումնասիրության արդյունքում ստացված արդյունքները և էականորեն տարբերվում են դրանցից:

Հետազոտության արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության գիտագործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտությունում ստացված արդյունքները, կատարված վերլուծությունները և մշակված առաջարկություններն ու մոտեցումները կարող են օգտագործվել ինչպես հանրապետության գործադիր իշխանության մարմինների, այդ թվում՝ ՀՀ էկոնոմիկայի, Ֆինանսների և Տարածքային կառավարման նախարարությունների, պետական տարբեր գործակալությունների, ձեռնարկատերերի միությունների, վենչուրային ձեռնարկատիրության խրախուսման ծրագրեր իրականացնող հիմնադրամների ու միջազգային կազմակերպությունների, այնպես էլ ՀՀ Ազգային ժողովի, հայրենական այլ հետազոտողների, մասնագետների և ԲՈՒՀ-երի ուսանողների կողմից:

Հետազոտության արդյունքների փորձարկը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» ամբիոնում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հինգ գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 156 էջ՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածությունում*** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպված են ստացված գիտական արդյունքները և նորույթը, ինչպես նաև դրանց գիտագործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում՝ «Ձեռնարկատիրության զարգացման տեսական հիմքերը և վենչուրային ձեռնարկատիրությունը», քննարկվել են ձեռնարկատիրության էության, դրա տեսական մեկնաբանությունների, տնտեսական համակարգում գործարարության ունեցած դերի, վենչուրային ձեռնարկատիրության հիմնական բնութագրերի, ինչպես նաև գործարարության այդ տեսակի գաղափարական հիմքը հանդիսացող ինովացիաների ու ինովացիոն գործունեության տեսամեթոդական ու գործնական հարցերը:

Ձեռնարկատիրության տեսական հիմքերի զարգացման առումով կարևոր տեղաշարժ կատարվեց ավստրիացի հայտնի տնտեսագետ Յ. Շումպետերի կողմից, որը ձեռնարկատերերի կողմից շահույթի (եկամտի) ստացումը պայմանավորում էր ինովացիաների կիրառման անհրաժեշտության հետ, ապացուցելով, որ առանց նորարարական մտքի ձեռնարկատիրական գործունեությունը դատապարտված է լճացման: Ձեռնարկատիրոջ համար, որպես որոշիչ նշանակություն ունեցող հատկանիշներ, նրա կողմից մատնանշվում էին հատկապես ձեռնարկատիրոջ ինովացիոն ունակությունները, նոր կամ ոչ ստանդարտ մտածելակերպը, նորարարությունների ներդրման հակվածությունը և ռիսկի դիմելու կարողությունը: Շումպետերը գտնում էր, որ ձեռնարկատերը, ակտիվորեն միջամտելով արտադրության և բաշխման գործընթացներին և փոփոխելով ձեռնարկատիրական գործունեության միջավայրը, կարող է հասնել լրացուցիչ եկամուտների ստացման՝ նպատակային ու արդյունավետ օգտագործելով այն նորամուծությունները (տեխնիկական, տեխնոլոգիական, կազմակերպական, կառավարչական, մարքեթինգային և այլն), որոնք ստեղծվում են ինչպես իր, այնպես էլ մյուս ձեռնարկատերերի կողմից: Նրա կարծիքով, անհատը շարունակում է հանդիսանալ ձեռնարկատեր այնքան ժամանակ, քանի դեռ նա մնում է որպես նորարար, և դադարում է այդպիսին հանդիսանալուց, երբ նրա գործունեությունը ձեռք է բերում տվյալ ոլորտի համար սովորական բնույթ և տեղավորվում է գործունեության համընդհանուր ճանաչում գտած եղանակների, մեխանիզմների և սկզբունքների շրջանակներում: Ընդ որում, Շումպետերը ենթադրում էր նաև, որ ձեռնարկատեր կարող է համարվել ոչ միայն արտադրության գործոնների սեփականատերը, այլև վարձու կառավարիչը (մենեջերը), եթե նրա գործունեությունը նույնպես ունի ինովացիոն բնույթ[1]: Նշենք, որ հենց Յ. Շումպետերին էլ, մեր կարծիքով, անհրաժեշտ է համարել վենչուրային ձեռնարկատիրության տեսական հիմքերի ստեղծողներից մեկը, եթե ոչ առաջինը, քանի որ այն բոլոր տեսական հիմնադրույթները, որոնք առաջ քաշվեցին նրա

[1] Տե՛ս Шумпетер Й. Теория экономического развития. - М.: Прогресс, 1982., էջ 47-55:

կողմից, արդիական ու կիրառական են նաև ներկայումս՝ հիմք հանդիսանալով վենչուրային ձեռնարակտիրության հետագա զարգացման համար:

Վերջինիս առումով, սակայն, կարևոր է արձանագրել, որ ինովացիաների առկայությունը որոշակիորեն փոխում է ձեռնարկատիրության բնույթը՝ դրան հաղորդելով նոր որակ և մոտիվացիա: Խնդիրը կայանում է նրանում, որ առանց ինովացիոն բաղադրիչի ձեռնարկատիրությունն օգտվում է շուկայական կոնյունկտուրայի տատանումներից և առաջարկի ու պահանջարկի փոփոխությունների դեպքում օբյեկտիվորեն տվյալ ապրանքային շուկան բերելով հավասարակշռության վիճակի, իսկ ինովացիոն բաղադրիչի ներմուծման դեպքում, տեղի է ունենում հակառակ գործընթացը. ձեռնարկատիրությունն ինքն է խախտում տվյալ ապրանքային շուկայում առկա հավասարակշռությունը կամ ձևավորում է սկզբունքորեն նոր ապրանքային շուկա՝ դրանով իսկ ստեղծելով նոր պահանջմունքներ, նոր ապրանքներ կամ նոր տեխնոլոգիաներ, ինչպես նաև բիզնեսի համար նոր հնարավորություններ, որն էլ ապահովում է ոչ սովորական կամ անհամեմատ բարձր շահութաբերություն: Հենց այս հատկությունն էլ, ի վերջո, հանդիսանում է այն ելակետը, որը տարբերակում է մտցնում սովորական և վենչուրային ձեռնարկատիրության միջև:

Իր հերթին, ինովացիաներն անքակտելիորեն կապված են ռիսկի գործոնի հետ, որը հանդիսանում է ձեռնարկատիրության հիմնական բաղադրիչներից մեկը, ուստի կարելի է ասել, որ ինովացիոն ցանկացած նախագծի կամ գաղափարի իրականացումն անհնար է առանց մեծ ռիսկի: Վերջինս արդարացված է միայն մեծ շահույթների ակնկալման պարագայում, իսկ այդպիսի ակնկալիքներին անհնար է հասնել առանց ինովացիաների կիրառման և դրա համար անհրաժեշտ ռիսկային կապիտալի ներդրման: Այսինքն, ստացվում է առնվազն չորս կետի վրա հիմնված յուրատեսակ փակ շրջան, ինչն էլ, հիմնականում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, հիմք հանդիսացավ ձեռնարկատիրական գործունեության նոր տեսակի՝ վենչուրային ձեռնարկատիրության առաջացման համար:

Վենչուրային ձեռնարկատիրությունը (կամ կրճատ՝ վենչուրը) ռիսկային նախագծերի, նորամուծությունների հիման վրա սկզբունքորեն նոր արտադրատեսակների արտադրության ուղղությամբ իրականացվող գործունեությունն է, որը կարող է ծավալվել ձեռնարկատիրության բոլոր ոլորտներում՝ արտադրությունում, իրացման ոլորտում, ֆինանսական, ապահովագրական գործում և այլն: Այն իրականացվում է վենչուրային (ռիսկային) ձեռնարկության ստեղծման միջոցով, որը փոքր ձեռնարկությունից աստիճանաբար վեր է ածվում բաց կամ փակ տիպի բաժնետիրական ընկերության:

Վենչուրային ձեռնարկության ստեղծման համար անհրաժեշտ են երեք հիմնական պայմաններ, այն է՝

ա) նորարարություն (գյուտ, հայտնագործություն) կամ նոր ապրանքի (տեխնոլոգիայի, ծառայության և այլն) ստեղծման գաղափար, որը սպառողների համար որոշակի հետաքրքրություն կարող է առաջացնել ու ապահովել շահույթ,

բ) ձեռնարկատեր, որը պատրաստ է նոր գաղափարի հիման վրա ստեղծել ձեռնարկություն և անցնել նոր արտադրանքի ստեղծման բոլոր փուլերը,

գ) վենչուրային կապիտալ, որը հանուն մեծ շահույթի պատրաստ է ներդրվել ռիսկի բարձր աստիճանի պայմաններում (ընդ որում՝ կապիտալը կարող է լինել ինչպես սեփական, այնպես էլ փոխառու, ինչպես մեկ անձի պատկանող, այնպես էլ կորպորատիվ կապիտալի տեսքով), այսինքն՝ վենչուրային կապիտալը յուրահատուկ կապիտալ է, որը սովորաբար տրամադրվում է արտաքին ներդրողների կողմից և օգտագործվում է մասնավոր, ուղղակի և ռիսկային (վենչուրային) ներդրումներ կատարելու համար, ընդ որում՝ եկամտաբերության միջին մակարդակը գերազանցող ոլորտներում:

Ձեռնարկատիրության այս տեսակի հիմնական նպատակը ոչ թե պարզապես շահույթի, այլ բարձր շահույթի ստացումն է, որն ապահովվում է արտադրանքի գնում ավելացված արժեքի համեմատաբար մեծ տեսակարար կշռի և փոխադարձ փոխարինելի ապրանքների բացակայությամբ, ինչն էլ սկզբնական շրջանում վենչուրային ձեռնարկության համար մենաշնորհային դիրք է ապահովում շուկայում: Չնայած ստացված շահույթը հիմնականում վերաներդրվում է արտադրության ընդլայնման նպատակով, այդուհանդերձ, վենչուրների բաժնետերերը դրանից «չեն դժգոհում», քանի որ բաժնետոմսերում ներդրումներ կատարելուց 4-5 տարի հետո վենչուրային կապիտալի շահութաբերության մակարդակը հասնում է միջին հաշվով 30-40%-ի, այն դեպքում, երբ «ստանդարտ» ապրանքների արտադրության շահութաբերության միջին նորման տարեկան կազմում է 8-10%:

Մյուս կողմից, բարձր շահութաբերությունը հաշվեկշռվում է ռիսկի բարձր մակարդակով և սնանկացման մեծ հավանականությամբ: Վենչուրային ձեռնարկությունների գործունեության համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ նման ֆիրմաների միայն 20%-ն է հասնում խոշոր կորպորացիայի ստողծմանը, մոտավորապես 60%-ը կլանվում են արդեն գործող խոշոր կորպորացիաների կողմից, իսկ մնացած 20%-ը սնանկանում են վերը նկարագրված տարբեր փուլերում: Այսինքն, բարձր շահույթի և բարձր ռիսկի համատեղումը հանգեցնում է սնանկացման հավանականության մեծացմանը, իսկ վերջինից, որպես կանոն, հաջողվում է խուսափել այն ձեռնարկություններին, որոնք մուտք են գործում շուկա հիմնականում այլընտրանք չունեցող և սպառողական մեծ արժեք ներկայացնող արտադրանքով[2]:

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ վենչուրային տիպիկ հիմնադրամը ձևավորվում է ինքնուրույն ընկերության ստեղծման ձևով, որի ժամանակ ներդրողն այդ ընկերությանը տրամադրում է պահանջվող միջոցները՝ կանոնադրական կապիտալում ներդրման և (կամ) համապատասխան վարկի տրամադրման ճանապարհով: Դրա դիմաց ներդրողը ստանում է ընկերության կանոնադրական ֆոնդի պայմանավորված մասնաբաժին, որը նա պահպանում է այնքան ժամանակ, քանի դեռ չի որոշի վաճառել այն և ստանալ համապատասխան շահույթ[3]:

---

[2] Տե՛ս Кэтрин Кемпбелл. Венчурный бизнес: новые подходы. Издательство: Альпина Бизнес Букс, 2008, էջ 36-64:

[3] Տե՛ս Цихан Т. Роль венчурной индустрии в формировании национальной инновационной системы // Теория и практика управления. – 2004. - N11., էջ 34:

Ինովացիաները (կամ նորարարությունները) վերաբերում են նոր արտադրանքներին, դրանց արտադրության ձևերին, կազմակերպական և ֆինանսական ոլորտների նորույթներին: Մասնագիտական գրականության մեջ ներկայացվում են «ինովացիաների» ամենատարբեր այլ սահմանումներ ևս, որոնք լինելով համեմատաբար պարզ կամ բարդ, ըստ էության, սկզբունքորեն չեն տարբերվում միմյանցից, ուստի կարելի է ասել, որ այս հասկացության սահմանման հարցում առկա է որոշակի մասնագիտական «համերաշխություն»: Մասնավորապես, ըստ «Վիքիպեդիա» հայտնի կայքի մեկնաբանությունների, ինովացիան նոր գիտելիքի մշակման ու ստացման մեջ ինտելեկտուալ որոշման ներդրման արդյունքն է, այն գիտելիքի, որը նախկինում չի օգտագործվել մարդկանց կյանքի տարբեր ոլորտների նորացման նպատակով (տեխնոլոգիաներ, արտադրատեսակներ, սոցիումի գոյության կազմակերպական այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ կրթությունը, կառավարումը, աշխատանքի կազմակերպումը, սպասարկումը, գիտությունը, տեղեկատվական ապահովվածությունը և այլն) և արտադրության ոլորտում դրանց հետագա ներդրման գործընթացը՝ լրացուցչ արժեքների ստացման ամրագրմամբ (շահույթ, առաջընթաց, լիդերություն, գերակայություն, արմատական բարելավում, որակական առավելություններ, կրեատիվություն և այլն)[4]:

Համակարգային նկարագրության մեթոդաբանության համաձայն ըստ չափանիշների և դրանց նշանակության ինովացիաների դասակարգումը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի տեսքով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Ինովացիաների դասակարգումը

Դասակարգման չափանիշը	Չափանիշի նշանակությունը			
Ազդեցության ընդգրկունությունը և մասշտաբայնու-թյունը	Գլոբալ	Ճյուղային	Լոկալ	
Ինովացիայի ռադիկալության մակարդակը	Բազիսային	Բարելավող	Պսեվդոինովացիա	
Գաղափարի աղբյուրը	Հայտնա-գործու-թյուն	Գյուտ	Ռացիո-նալի-զատորա-կան առաջար-կություն	Այլ
Նորարարության տեսքը	Կոնստրուկ-ցիա և սարքավորում	Տեխնոլոգիա	Հումք, Նյութ	Կենդանի օրգա-նիզմներ
Գոյություն ունեցող անալոգների փոխարինման ձևը	Ազատ փոխարինում	Համակար-գային փոխարինում	-	-

[4] http://ru.wikipedia.org/wiki/%D0%98%D0%BD%D0%BD%D0%BE%D0%B2%D0%B0%D1%86%D0%B8%D1:

Արտասահմանյան երկրների փորձը ցույց է տալիս, որ ինովացիոն նախագծերի գնահատման մեթոդներն ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ որոշակի թերություններ, ինչը ստիպում է գործնականում կիրառել դրանց համակցված կամ կոմբինավորված տարբերակները: Այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում ինովացիոն նախագծերի փորձաքննության ժամանակ կիրառել որոշակի սկզբունքներ, որոնք հնարավորություն կտան մի կողմից ապահովել կիրառվող մեթոդների դրական կողմերի օգտագործման համալիր մոտեցում, իսկ մյուս կողմից՝ հնարավորինս զերծ կպահեն այդ մեթոդների կիրառման արդյունքում ստացված գնահատականների հիման վրա դրանց թերությունների հնարավոր բացասական ազդեցությունից: Այս կապակցությամբ, հաշվի առնելով և ընդհանրացնելով առկա արտասահմանյան փորձը, առաջարկում ենք մեր հանրապետությունում ինովացիոն նախագծերի փորձաքննության և դրանց արդյունավետության գնահատման ժամանակ կիրառել հետևյալ սկզբունքները՝

1. հետազոտողների անկախ խմբերի առկայության ապահովում, որոնք կարող են արբիտրի դեր կատարել փորձաքննության վիճարկելի արդյունքերի քննարկման, դրանք կիրառող մասնագետների և վերահսկողության մեթոդների ընտրության հարցերում,

2. ձեռնարկության ավելացված արժեքի մեջ ինովացիաների և դրանց հետազոտությունների ոլորտում գործունեության ծախսերը որպես արտադրական ծախսեր դիտարկում,

3. հնարավորության դեպքում բազմատարբերակային ինովացիոն նախագծերի քննարկում,

4. միջինժամկետ հեռանկարի կտրվածքով նախնական կանխատեսումների և ծախսերի պլանավորման իրականացում, որպեսզի հնարավորություն ստեղծվի որոշել ենթադրվող արդյունավետության մակարդակը և վերահսկողության համար անհրաժեշտ ժամանակը,

5. պետական մակարդակով գիտատեխնիկական քաղաքականության համակարգի զարգացման հեռանկարների հետ վերահսկողության մեթոդների կապում՝ երկրում և աշխարհում ընթացող ինովացիոն գործընթացներից հետ չմնալու նպատակով,

6. կատարվող կանխատեսումների հիմքում ցուցանիշների՝ ծախսերի առավելագույն և ակնկալիքների նվազագույն մակարդակների օգտագործում՝ գնահատման գործընթացի իրատեսության անհրաժեշտ մակարդակի ապահովման նակատառումներով:

Ամփոփելով այս բնագավառում առկա միջազգային փորձը և կարևորելով Հայաստանում որակյալ ինովացիոն նախագծերի ընտրության խնդիրը, որպես ներդրումային նախագծերի գնահատման հիմնական չափանիշներ մեր կողմից առաջարկվում է կիրառել հետևյալ չափանիշները՝ ըստ 5 առանձին խմբերի:

1. Կազմակերպության նպատակները, ռազմավարությունը, քաղաքականությունը և արժեքները, այդ թվում՝

- նախագծի համադրելիությունը կազմակերպության ընթացիկ ռազմավարության և երկարաժամկետ պլանների հետ,

- կազմակերպության ռազմավարության փոփոխության հիմնավորվածությունը (այն դեպքում, երբ նման անհրաժեշտություն առաջանում է նախագծի ընդունման դեպքում),
- նախագծի համապատասխանությունը ռիսկի դիմելու կազմակերպության վերաբերմունքին (ռազմավարությանը),
- նախագծի համապատասխանությունը նորարարությունների կիրառման կազմակերպության վերաբերմունքին (ռազմավարությանը),
- նախագծի համապատասխանությունը կազմակերպության այն պահանջներին, որոնք վերաբերում են ժամանակի գործոնին (երկարաժամկետ կամ կարճաժամկետ նախագծեր),
- նախագծի համապատասխանությունը կազմակերպության աճի ներուժին,
- կազմակերպության կայունության վիճակը,
- կազմակերպության դիվերսիֆիկացիայի մակարդակը, որն ազդում է դրա կայունության վիճակի վրա (այսինքն՝ այն ճյուղերի քանակը, որոնք կազմակերպության գործունեության հիմնական ճյուղի հետ չունեն արտադրական կապեր, ինչպես նաև դրանց տեսակարար կշիռը կազմակերպության արտադրության ընդհանուր ծավալում),
- ֆինանսական մեծ ծախսերի և շահույթի ստացման հետաձգման ազդեցությունը կազմակերպության կայունության ներկա վիճակի վրա,
- ժամանակային լագի, ծախսերի և պլանավորված խնդիրների լուծման հետ կապված շեղումների, ինչպես նաև նախագծի իրականացման գործընթացի հնարավոր խաթարումների ազդեցությունը կազմակերպության գործերի վրա:

2. Ֆինանսական չափանիշներ, այդ թվում՝

- ներդրումների չափը (ներդրումներն արտադրությունում, մարքեթինգում, հետազոտությունների համար կատարված ծախսեր և զարգացման արժեքը, եթե հետազոտությունը հաջող է անցել ու ներդրվել),
- շահույթի տարեկան պոտենցիալ չափը,
- զուտ շահույթի սպասվող նորման,
- նախագծի համապատասխանությունը կազմակերպությունում ընդունված կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության չափանիշին,
- նախագծի իրականացման համար սկզբնական ծախսերի մեծությունը,
- ենթադրվող ժամանակահատվածը, որի ավարտից հետո տվյալ նախագիծը կսկսի եկամուտներ բերել,
- նախագծով նախատեսված անհրաժեշտ պահերին ֆինանսական հնարավորությունների առկայությունը,
- տվյալ նախագծի ընդունման ազդեցությունը ֆինանսական միջոցներ պահանջող այլ նախագծերի վրա,
- նախագծի ֆինանսավորման համար փոխառու միջոցների (վարկերի) ներգրավման անհրաժեշտությունը և դրա տեսակարար կշիռը ներդրումների կառուցվածքում,
- նախագծի իրականացման հետ կապված ֆինանսական ռիսկերը,

- նախագծից ստացվող եկամուտների կայունությունը (այսինքն՝ արդյո՞ք նախագիծն ապահովում է ֆիրմայի եկամուտների կայուն աճի տեմպեր, թե՞ այդ եկամուտների մակարդակը տատանվում է տարեց-տարի),
- այն ժամանակահատվածը, որից հետո կսկսվի արտադրանքի թողարկումը (ծառայության մատուցումը), և հետևաբար՝ կապիտալ ներդրումների հետգնման գործընթացը,
- հարկային օրենսդրության և հարկային արտոնությունների օգտագործման հնարավորությունները,
- ֆոնդահատույցը, այսինքն՝ նախագծի իրականացման արդյունքում ստացված տարեկան համախառն եկամտի և կապիտալ ծախսերի հարաբերակցությունը (իսկ չափանիշն այս հարցում կայանում է նրանում, որ եթե տվյալ ինովացիոն նախագիծն իրականացնող կազմակերպության ֆոնդահատույցը ցածր է միջին ճյուղային մակարդակից, ապա տվյալ կազմակերպությունը ճգնաժամի ժամանակ առաջինը սնանկանալու հնարավորություններ ունի),
- նախագծով նախատեսված արտադրանքի ծախսերի կառուցվածքի օպտիմալությունը (գնահատվում է թե որքանո՞վ է օգտագործվում համեմատաբար էժան և մատչելի արտադրական ռեսուրսներ):

3. Գիտատեխնիկական չափանիշներ, այդ թվում՝

- նախագծի տեխնիկական հոջողության հավանականությունը,
- արտոնագրային հստակությունը (չի խախտվել արդյո՞ք որևէ արտոնագրատիրոջ իրավունքները),
- արտադրանքի յուրինակությունը (նման կամ փոխարինելի արտադրատեսակների առկայությունը),
- նախագծի իրականացման համար անհրաժեշտ գիտատեխնիկական ռեսուրսների առկայությունը,
- նախագծի համապատասխանությունը կազմակերպության գիտատեխնիկական և փորձնակոնստրուկտորական քաղաքականությանը,
- մշակումների համար պահանջվող ժամանակը և արժեքը,
- կատարված մշակումների հիման վրա հետագա հնարավոր մշակումների և դրանց կիրառման ու հետագա գեներացման հնարավորությունները,
- ազդեցությունը այլ նախագծերի վրա,
- արտոնագրաունակությունը (հնարավոր է արդյո՞ք նոր մշակումը պաշտպանել արտոնագրով),
- խորհրդատվական ֆիրմաների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը կամ արտաքին միջավայրում մշակումների համար պատվերների տեղադրման անհրաժեշտությունը:

4. Արտադրական չափանիշներ, այդ թվում՝

- նախագծի իրականացման համար տեխնոլոգիական նորարարությունների անհրաժեշտությունը,
- նախագծի համապատասխանությունն առկա արտադրական հզորություններին (կբավարարի արդյո՞ք գոյություն ունեցող արտադրական հզորությունները նախագծի իրականացման համար, թե՞ անհրաժեշտ կլինի լրացուցիչ ծախսեր կատարել),
- արտադրական անձնակազմի առկայությունը (ըստ թվաքանակի և որակավորման),
- արտադրական ծախքերի մեծությունը և դրա համեմատությունը մրցակից ֆիրմաների նույն ցուցանիշների հետ,
- լրացուցիչ արտադրական հզորությունների ներգրավման անհրաժեշտությունը:

5. Արտաքին և բնապահպանական չափանիշներ, այդ թվում՝

- նախագծով նախատեսված արտադրանքի և արտադրական գործընթացների հնարավոր բացասական ազդեցությունը,
- նախագծի իրավական ապահովվածությունը, դրա համապատասխանությունը օրենսդրությանը,
- օրենսդրության հետագա փոփոխությունների հնարավոր ազդեցությունը նախագծի իրականացման վրա,
- նախագծի իրականացման վրա հասարակական կարծիքի հնարավոր ազդեցությունը:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Վենչուրային և ինովացիոն գործունեության համակարգը ՀՀ-ում», ներկայացվել և վերլուծվել են վենչուրային և ինովացիոն գործունեության ոլորտներում իրականացվող ՀՀ տնտեսական քաղաքականությունը, վենչուրային ձեռնարկատիրության միջավայրի հիմնական բնութագրերը, այն է՝ հայեցակարգային մոտեցումները, առկա վիճակագրական տվյալները, միջազգային չափանիշների հետ ՀՀ այս ոլորտի հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծությունը, ինչպես նաև Հայաստանում ինովացիաների և վենչուրային ձեռնարկատիրության կարգավորման ծրագրային և օրենսդրական հիմքերի հետ կապված արդիական հիմնահարցերը:

Վենչուրային ձեռնարկատիրության զարգացման տեսանկյունից կարևոր է այնպիսի տնտեսական քաղաքականության իրականացումը, որը ոչ միայն նպաստավոր պայմաններ է ապահովում այս գործունեության համար, այլև ուղղակիորեն խթանում և զարգացնում է այն: Այս առումով կատարված վերլուծությունները թույլ են տալիս որոշակի պատկերացում ունենալ ՀՀ-ում վենչուրային և ինովացիոն գործունեության միջավայրի հիմնական ցուցանիշների և ՀՀ-ում վարվող համապատասխան պետական քաղաքականության մասին, և որոնց հիմնական բնութագրական կողմերը կայանում են հետևյալում:

1. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համազգային նախագծի հայեցակարգի» ռազմավարական ուղղությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից ոչ բոլորն են հստակ և կոնկրետ թիրախներ նախանշում, որոնց մի մասի առումով,

արդեն իսկ ընդունված են առանձին փաստաթղթեր և հայեցակարգեր, իսկ մի մասն էլ նախատեսվում է ընդունել մոտ ապագայում:

2. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգի» հիմնական նպատակներն, ըստ այդ փաստաթղթի, ուղղված են Երևանի ու մարզերի միջև անհամասնությունների և բնակչության եկամուտների միջև տարբերության կրճատմանը, գործարար միջավայրի բարելավմանը և Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը: : Մեր կարծիքով, այս նպատակների ամրագրումը ցույց է տալիս, որ վենչուրային ձեռնարկատիրության զարգացումը, որի համար էլ շատ երկրներում նման քաղաքականություն է որդեգրվել, տվյալ դեպքում առաջնային նպատակ չի հանդիսանում, ինչն էլ, կարծում ենք, Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ներկա մակարդակի, կամ էլ տվյալ հայեցակարգի չիրականացման պատճառներից մեկն է:

3. Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) պաշտոնական տվյալների, 2006-2011թթ. ՀՀ-ում գործող գիտական կազմակերպությունների ընդհանուր թվաքանակը գնալով նվազել է, նույն միտումն ունի նաև գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակի դինամիկան, նշված կազմակերպությունների կողմից գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը, թեև ունեցել են կայուն աճի միտում, սակայն այդ աճը հիմնականում պայմանավորված է եղել գնաճով և, ըստ էության, կարելի է այն բնականոն աճ համարել: Գիտական հետազոտություններով զբաղվող կազմակերպությունների կողմից գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի կառուցվածքում բավականին մեծ է բյուջետային միջոցների տեսակարար կշիռը, ինչպես ընդհանուր առմամբ ողջ գիտատեխնիկական աշխատանքների, այնպես էլ սեփական ուժերով իրականացված այդ աշխատանքների ծավալներում գերակշռել են հետազոտություններն ու մշակումները:

4. ՀՀ-ում համախառն տնօրինվող եկամտի ծավալը, ընթացիկ գներով, 2006 թվականին կազմել է 3034.2 մլրդ. դրամ, 2007 թվականին աճել է 17.6%-ով և կազմել 3567.8 մլրդ. դրամ, 2008 թվականին աճել է 13.9%-ով և կազմել 4060.5 մլրդ. դրամ, ապա 2009 թվականին տեղի է ունեցել այս ցուցանիշի զգալի անկում՝ նվազելով 13.8%-ով և կազմել 3497.9 մլրդ. դրամ, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, ապա 2010 թվականին կրկին աճ է գրանցվել 2009թվ-ի նկատմամբ կազմելով՝ 8.5%:

Եթե համարենք, որ ճգնաժամի ազդեցությունը ժամանակավոր երևույթ է և դիտարկենք այս ցուցանիշի միայն մինչճգնաժամային դինամիկան, ապա կարելի է ասել, որ համախառն տնօրինվող եկամտի աճը դեռևս բավարար չի կարելի համարել վենչուրային ձեռնարկատիրության զարգացման համար այս աղբյուրը լուրջ դիտարկելու առումով:

5. Վերջնական սպառման ծախսերի դինամիկան և դրա կառուցվածքը ցույց են տալիս, որ չնայած առկա աճին, վերջնական սպառման ծախսերում գերակշռում են տնային

տնտեսությունների ծախսերը (2006թ. այն կազմել է վերջնական սպառման ծախսերի 87.6%-ը, 2007 թվ-ին՝ 87.4%-ը, 2008 թվ-ին՝ 87.3%-ը և 2009 թվ-ին՝ 85.5%-ը), իսկ համախառն խնայողությունները, որոնք աղքատության բարձր մակարդակի պայմաններում, հասկանալի է՝ բաշխված են խիստ անհամաչափ, 2006թ. կազմել են վերջնական սպառման ծախսերի 38.7%-ը, 2007 թվ-ին՝ 38.5%-ը, 2008 թվ-ին՝ 39.1%-ը և 2009 թվ-ին՝ 18.8%-ը և 2010թվ-ին՝ 15%, ինչը, բնականաբար շատ ցածր մակարդակ է վենչուրային ձեռնարկատիրության համար որպես ներդրումների աղբյուր դիտարկելու տեսանկյունից:

6. Դիտարկելով ՀՀ միջազգային ներդրումային դիրքի ցուցանիշները, կարելի է փաստել, որ 2008 թվականին, նախորդ տարվա համեմատ, ակտիվներն աճել են 10.2%-ով և կազմել ավելի քան 3.1 մլրդ. ԱՄՆ դոլար (2007 թվ-ի 2.8 մլրդ. դոլարի փոխարեն), 2009 թվ-ին՝ աճել են 35.8%-ով և կազմել 4.2 մլրդ. ԱՄՆ դոլար, իսկ 2010 թվ-ին՝ աճել են 2.6%-ով և կազմել 4.3 մլրդ. ԱՄՆ դոլար: Չնայած պորտֆելային ներդրումների շատ ցածր մակարդակին, այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունն ունի ներդրումների ներգրավման որոշակի ներուժ, և համապատասխան բարենպաստ միջավայրի ձևավորման պարագայում հնարավոր կլինի վենչուրային ներդրումների համար կիրառել նաև պետական օժանդակության մեխանիզմները:

7. Օտարեկրյա ուղղակի ներդրումների դինամիկան ՀՀ-ում բավականին տատանողական բնույթ ունի, ինչը մի կողմից բացատրելի է (դրա վրա ազդում են ինչպես երկրի ներսում, այնպես էլ մեր տարածաշրջանում և ընդհանուր առմամբ՝ ողջ աշխարհում տեղի ունեցող տնտեսական և քաղաքական գործընթացները), իսկ մյուս կողմից՝ նաև մտահոգիչ, քանի որ վկայում է մեր երկրում ներդումային ոչ կայուն միջավայրի առկայության մասին:

ՀՀ-ում ներդրումային միջավայրը (հատկապես՝ վենչուրային ձեռնարկատիրության և ինովացիաների ոլորտներում) չի կարելի գրավիչ համարել՝ կապված ներդրումների անբավարար ծավալների, դրանց ծավալների տատանողական բնույթի, օտարերկրյա ուղղակի ներդրումների ծագման երկրների խիստ սակավության, ներդրումների ճյուղային (ոլորտային) ոչ այնքան բարենպաստ կառուցվածքի և ընդհանուր առմամբ ներդրումային ենթակառուցվաքների իներցիոն գործունեության հետ: Բացի այդ, ինովացիոն ներդրումների և վենչուրային ձեռնարկատիրության զարգացման բնագավառում ընդունված օրենքները, ՀՀ կառավարության որոշումները և ՀՀ Էկոնոմիկային նախարարության հաստատած հայեցակարգերն, ըստ էության, բավականին մակերեսային բնույթ ունեն, դրանք հաճախ մշակվել են առանց գիտական հետազոտությունների և համապատասխան վերուծությունների՝ հիմքում դնելով հիմնականում արտասահմանյան փորձը, իսկ մշակված և հաստատված փաստաթղթերով ամրագրված միջացառումների գերակշիռ մասն էլ գործնականում մնացել են թղթի վրա և կյանքի չեն կոչվել:

Ատենախոսության երրորդ գլխում, որը կոչվում է «Վենչուրային ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգային ուղիներն ու մոտեցումները ՀՀ-ում», ներկայացվել են հեղինակի կողմից մշակված ինովացիոն ներդրումների ոլորտում պետական

քաղաքականության հայեցակարգային մոտեցումները և վենչուրային ձեռնարկատիրության զարգացման ուղիներն ու միջոցառումները, մասնավորապես՝ վենչուրային և իոնվացիոն ձեռնարկատիրության համակարգերի զարգացման հիմնական գործոնների, պայմանների ու ելակետային անհրաժեշտ նախադրյալների, վենչուրային ներդրումային գործուն համակարգի ձևավորման մեթոդական մոտեցումների, այդ համակարգի կառուցվածքային բաղադրիչների ու ձևավորման սկզբունքային ուղղությունների, օրենսդրական կարգավորման կատարելագործման, ներդրումային միջավայրի բարելավման ու դրանց գրավչության մակարդակի բարձրացման և այլ ուղղություններով:

Հայաստանում վենչուրային բիզնեսի զարգացման տեսանկյունից խիստ կարևոր է վենչուրային ներդրումային քաղաքականության հայեցակարգի մշակումը, որը ներկայումս բացակայում է մեր հանրապետությունում: Վենչուրային ներդրումային քաղաքականության հայեցակարգի, որպես ռազմավարական փաստաթղթի, կարևոր ելակետը տվյալ քաղաքականության հիմնական նպատակների ու խնդիրների հստակ ձևակերպումն է, որի առումով, հաշվի առնելով ինչպես արտասահմանյան փորձը, այնպես էլ ՀՀ տնտեսական միջավայրի հիմնական բնութագրերը, առաջարկում ենք սահմանել հետևյալները.

ա) ինովացիոն գործունեության ներդրումային ապահովվածության բարելավումը (հատկապես՝ փոքր ինովացիոն ձեռնարկատիրության հատվածում),

բ) առաջընթաց ապահովող ինովացիոն, այդ թվում՝ տեխնոլոգիական նախագծերի իրականացման համար վենչուրային ներդրումների ֆինանսական, կադրային, կազմակերպական և նորմատիվ-իրավական առավել բարենպաստ պայմանների ստեղծումը, որոնք ակնհայտորեն կբարձրացնեն հայրենական արտադրատեսակների մրցունակությունը միջազգային շուկաներում,

գ) փոքր ինովացիոն ձեռնարկատիրության զարգացումը տնտեսության իրական հատվածում, գիտատեխնիկական և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում,

դ) գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության արդյունքների առևտրայնացման ու արտադրության մեջ ներդրման գործընթացին աջակցությունը,

զ) տնտեսության կորպորատիվ հատվածի մոդեռնացման գործընթացին աջակցությունը՝ տնտեսության իրական հատվածում գիտատեխնիկական առաջընթացի հետինդուստրիալ փուլին համապատասխանող գիտաինովացիոն ընկերությունների ձևավորման միջոցով,

է) որպես ներդրումային ռեսուրս տնտեսական շրջանառության մեջ բնակչության խնայողությունների ներգրավումը:

Վենչուրային ներդրումային համակարգի ձևավորման միջոցով դրված նպատակներին ու ռազմավարական խնդիրների լուծմանը, կարծում ենք, կարելի է հասնել տվյալ համակարգի զարգացման գործոնների և սուբյեկտիվ պայմանների համալիրի տեսքով ելակետային անհրաժեշտ նախադրյալների մշակման դեպքում: Ընդ որում, այս կապակցությամբ անհրաժեշտ է առաջնորդվել սկզբունքային երկու մեթոդական մոտեցումներով.

1) համակարգի ձևավորման նախադրյալներն իրենց բնույթով օբյեկտիվ են և առանց դրանց սկզբունքորեն իրատեսական չէ հրապարակային վերարտադրությունը, ուստի անհրաժեշտ է որպես այդպիսի գործոններ դիտարկել պատճառ-ռեսուրսները և պատճառ-գործընթացները,

2) գործոնների այն համալիրը, որի ազդեցությամբ ձևավորվում և զարգանում է վենչուրային ներդրումային համակարգը, հիմնականում կազմված է ընդհանուր մակրոտնտեսական գործոններից, սակայն տվյալ համակարգի վրա ազդեցության հետևանքով դրանք ձեռք են բերում հատուկ ձևեր ու արտահայտման մեխանիզմներ:

Առաջնորդվելով այս մոտեցումներով, ուսումնասիրելով արտասահմանյան առաջավոր փորձը և ՀՀ առանձնահատկությունները, ատենախոսության երրորդ գլխում ներկայացվել է հեղինակի կողմից մշակված վենչուրային ներդրումային քաղաքականության հայեցակարգ, երեք՝ ինովացիոն-վերարտադրողական, ֆինանսական և ենթակառուցվածքային-ինստիտուցիոնալ բլոկներով:

Մեր հանրապետությունում վենչուրային բիզնեսի զարգացման համար ներկայումս առաջին հիմնական ուղղությունը վենչուրային և ինովացիոն գործունեության օրենսդրական դաշտի ձևավորումն է, որի համար նախ և առաջ անհրաժեշտ է վերանայել ու լրամշակել «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որը բավականին մակերեսային կարգավորումներ է տալիս տվյալ գործունեության սուբյեկտների համար: Մասնավորապես, առաջարկում ենք՝

ա) էականորեն ընդլայնել և հստակեցնել օրենքում օգտագործվող հասկացությունները (այն իմաստով, որ դրանց մեկնաբանությունները պետք է լինեն ոչ միայն իրավական, այլև հստակ արտահայտեն դրանց տնտեսագիտական բովանդակությունը),

բ) այս օրենքում հստակ ամրագրել տվյալ աջակցության այն կոնկրետ միջոցներն ու մեխանիզմները, որոնց օգնությամբ էլ պետք է ապահովվի պետական համապատասխան աջակցությունը (ընդ որում, հարկ է նշել, որ այս հարցն ամենակարևորն է տվյալ օրենքի իմաստով, սակայն այն բացակայում է, որն էլ հիմք տալիս մեզ պնդելու, որ տվյալ օրենքը դեկլարատիվ բնույթ ունի),

գ) «բացել» և դետալացված տեսքով ներկայացնել օրենքի «Ինովացիոն գործունեության ֆինանսավորման աղբյուրները», «Պետական ինովացիոն քաղաքականությունը» և «Ինովացիոն գործունեության ոլորտում միջազգային համագործակցությունը» հոդվածները:

Մյուս օրենքը, որն անհրաժեշտ է մշակել և ընդունել «Վենչուրային ձեռնարկատիրության և վենչուրային հիմնադրամների մասին» ՀՀ օրենքն է, որի համար կարելի է օգտագործել նաև արդեն իսկ պաշտոնական շրջանառության մեջ գտնվող «Վենչուրային հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, բնականաբար, արմատապես լրամշակելով այն և վերացնելով դրա թերությունները, ինչպես նաև անհրաժեշտ լրամշակել նաև «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը, որի ուղղությամբ կոնկրետ առաջարկությունները ներկայացված են ատենախոսության 3.2

ենթագլխում: Բացի այդ, կոնկրետ առաջարկություններ են ներկայացվել նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում որոշակի փոփոխությունների կատարման առումով, որի արդյունքում էականորեն կխթանվի վենչուրային ձեռնարկություններում օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացը:

Վենչուրային ձեռնարկատիրության զարգացման հաջորդ ուղղությունը, մեր կարծիքով, գործարարության, ներդրումային և դրանց տեղեկատվական միջավայրերի բարելավումն ու գրավչության մակարդակի բարձրացումն է, որի նպատակով նույնպես մշակվել և առաջարկվել են կոնկրետ ուղղություններ և միջոցառումներ:

Մյուս կարևոր ուղղությունն ինովացիաների և ներդրումային մեխանիզմների առանձնահատուկ բնույթի օգտագործումն է, որոնք, ինչպես հայտնի է, գործում են կուտակային սկզբունքով: Զարգացման նպատակով կատարվող ծախսերի սկզբնական մեծացումը հետագայում բերում է արտադրության մասշտաբների ընդլայնմանն ու արդյունավետության բարձրացմանը, ավելացված արժեքի մեծացմանը և ռեսուրսների կուտակմանը, և դրանով իսկ՝ զարգացման հնարավորությունների ընդլայնմանը: Այս համատեքստում, մեր կարծիքով, անհրաժեշտ է՝

ա) մշակել, ներդնել ու շարունակական բարելավել ձեռնարկատիրության ֆինանսական օժանդակության մեխանիզմները,

բ) օպտիմալացնել հարկային և մաքսային համակարգերը, ինչպես նաև հնարավորինս պազեցնել հարկային ու մաքսային վարչարարությունը,

գ) բարելավել վենչուրային ձեռնարկատիրության իրավական և տեղեկատվական ապահովվածությն մակարդակը,

դ) բարձրացնել վենչուրային ձեռնարկատիրության սոցիալական և տնտեսական արդյունավետության մակարդակը:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները, որոնցից հիմնականները, ի թիվս արդեն ներկայացվածների, կայանում են հետևյալում:

1. Ինովացիաների առկայությունը որոշակիորեն փոխում է ձեռնարկատիրության բնույթը՝ դրան հաղորդելով նոր որակ և մոտիվացիա: Խնդիրը կայանում է նրանում, որ առանց ինովացիոն բաղադրիչի ձեռնարկատիրությունն օգտվում է շուկայական կոնյունկտուրայի տատանումներից և առաջարկի ու պահանջարկի փոփոխությունների դեպքում փորձում է շահույթ ստանալ՝ օբյեկտիվորեն տվյալ ապրանքային շուկան բերելով հավասարակշռության վիճակի, իսկ ինովացիոն բաղադրիչի ներմուծման դեպքում տեղի է ունենում հակառակ գործընթացը. ձեռնարկատիրությունն ինքն է խախտում տվյալ ապրանքային շուկայում առկա հավասարակշռությունը կամ ձևավորում է սկզբունքորեն նոր ապրանքային շուկա՝ դրանով իսկ ստեղծելով նոր պահանջմունքներ, նոր ապրանքներ կամ նոր տեխնոլոգիաներ, ինչպես նաև բիզնեսի համար նոր հնարավորություններ, որն էլ ապահովում է ոչ սովորական կամ անհամեմատ բարձր շահութաբերություն: Հենց այս

հատկությունն էլ, ի վերջո, հանդիսանում է այն ելակետը, որը տարբերակում է մտցնում սովորական և վենչուրային ձեռնարկատիրության միջև:

2. Ինովացիաներն անքակտելիորեն կապված են ռիսկի գործոնի հետ, որը հանդիսանում է ձեռնարկատիրության հիմնական բաղադրիչներից մեկը, ուստի կարելի է ասել, որ ինովացիոն ցանկացած նախագծի կամ գաղափարի իրականացումն անհնար է առանց մեծ ռիսկի, ձեռնարկատիրական մեծ ռիսկն արդարացված է միայն մեծ շահույթների ակնկալման պարագայում, իսկ մեծ շահույթներ անհնար է ստանալ առանց ինովացիաների կիրառման և դրա համար անհրաժեշտ ռիսկային կապիտալի ներդրման: Այսինքն, ստացվում է առնվազն չորս կետի վրա հիմնված յուրատեսակ փակ շրջան, ինչն էլ, հիմնականում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, հիմք հանդիսացավ ձեռնարկատիրական գործունեության նոր տեսակի՝ վենչուրային ձեռնարկատիրության առաջացման համար:

3. Վենչուրային ձեռնարկության ստեղծման համար անհրաժեշտ են երեք հիմնական պայմաններ, այն է՝

ա) նորարարություն (գյուտ, հայտնագործություն) կամ նոր ապրանքի (տեխնոլոգիայի, ծառայության և այլն) ստեղծման գաղափար, որը սպառողների համար որոշակի հետաքրքրություն կարող է առաջացնել ու ապահովել շահույթ,

բ) ձեռնարկատեր, որը պատրաստ է նոր գաղափարի հիման վրա ստեղծել ձեռնարկություն և անցնել նոր արտադրանքի ստեղծման բոլոր փուլերը,

գ) վենչուրային կապիտալ, որը հանուն մեծ շահույթի պատրաստ է ներդրվել ռիսկի բարձր աստիճանի պայմաններում (ընդ որում՝ կապիտալը կարող է լինել ինչպես սեփական, այնպես էլ փոխառու, ինչպես մեկ անձի պատկանող, այնպես էլ կորպորատիվ կապիտալի տեսքով), այսինքն՝ վենչուրային կապիտալը յուրահատուկ կապիտալ է, որը սովորաբար տրամադրվում է արտաքին ներդրողների կողմից և օգտագործվում է մասնավոր, ուղղակի և ռիսկային (վենչուրային) ներդրումներ կատարելու համար, ընդ որում՝ եկամտաբերության միջին մակարդակը գերազանցող ոլորտներում:

4. Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մասնագիտական գրականության մեջ առկա՝ ինովացիոն նախագծերի փորձաքննության և դրանց արդյունավետության գնահատման մեթոդներն ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ որոշակի թերություններ, ինչը ստիպում է գործնականում կիրառել դրանց համակցված կամ կոմբինավորված տարբերակները: Այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում ինովացիոն նախագծերի փորձաքննության ժամանակ կիրառել որոշակի սկզբունքներ, որոնք հնարավորություն կտան մի կողմից ապահովել կիրառվող մեթոդների դրական կողմերի օգտագործման համալիր մոտեցում, իսկ մյուս կողմից՝ հնարավորինս զերծ կպահեն այդ մեթոդների կիրառման արդյունքում ստացված գնահատականների հիման վրա դրանց թերությունների հնարավոր բացասական ազդեցությունից:

5. Ինովացիոն ներդրումների և վենչուրային ձեռնարկատիրության զարգացման բնագավառում ընդունված օրենքները, ՀՀ կառավարության որոշումները և ՀՀ էկոնոմիկային նախարարության հաստատած հայեցակարգերն, ըստ էության, բավականին մակերեսային

բնույթ ունեն, դրանք հաճախ մշակվել են առանց գիտական հետազոտությունների և համապատասխան վերուծությունների՝ հիմքում դնելով հիմնականում արտասահմանյան փորձը, իսկ մշակված և հաստատվածփաստաթղթերով ամրագրված միջացառումների գերակշիռ մասն էլ գործնականում մնացել են թղթի վրա և կյանքի չեն կոչվել:

6. Վենչուրային ձեռնարկատիրության զարգացումը պահանջում է վենչուրային ներդրումային քաղաքականության համակողմանիորեն հիմնավորված հայեցակարգ, վենչուրային ներդրումային համակարգի գործունեության արդյունավետությունն երաշխավորող մեխանիզմներ, ինչպես նաև դրանցով ենթադրվող գործառույթների իրականացման տեղեկատվական ժամանակակից համակարգ:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Նարեկ Խաչատրյան «Ձեռնարկատիրական գործունեությունը որպես շուկայական հարաբերությունների շարժիչ ուժ», ՀՀ Սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան Գիտ. հոդվածների ժողովածու: 2011թ., 4(12), էջ 59-67 :

2. Սարգիս Ղանթարջյան, Նարեկ Խաչատրյան «Վենչուրային ձեռնարկատիրության հիմնական բնութագրերը և առանձնահատկությունները», ՀՀ Սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան Գիտ. հոդվածների ժողովածու: 2011թ., 4(12), էջ 16-22:

3. Նարեկ Խաչատրյան «Վենչուրային ներդրումների ոլորտում ՀՀ պետական քաղաքականության հիմնական մոտեցումները», ՀՀ Սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան Գիտ. հոդվածների ժողովածու: 2013թ., 3(19), էջ 60-65:

4. Նարեկ Խաչատրյան «Վենչուրային ներդրումային համակարգի ձևավորման հիմնական մոտեցումները Հայաստանում», ՀՀ Սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան Գիտ. հոդվածների ժողովածու: 2012թ., 1(13), էջ 103-109:

5. Նարեկ Խաչատրյան «Ներդրումային միջավայրի համառոտ նկարագիրը ՀՀ-ում», ՀՀ Սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան Գիտ. հոդվածների ժողովածու: 2013թ., 3(19), էջ 66-73:

ХАЧАТРЯН НАРЕК САРКИСОВИЧ

“ПУТИ РАЗВИТИЯ ВЕНЧУРНОГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В АРМЕНИИ”

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 “Экономика, управление народным хозяйством и его отраслями»

Защита состоится 27 декабря 2013 г. в 15:00 часов на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике действующего в Ереванском государственном университете, по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию вопросов развития венчурного предпринимательства и разработке подходов, направленных на их решение. Венчурное предпринимательство, будучи одним из видов предпринимательской деятельности, имеет большое значение в системе современных рыночных отношений и занимает особое место в экономических системах как развитых, так и развивающихся стран. Данный вид предпринимательства может стать для Армении наиважнейшим фактором экономического развития, восстановления производственного потенциала республики, стимулирования научно-технического прогресса, а также фактором внедрения их результатов в экономику.

Главной целью диссертации является разработка конкретных мероприятий, а также концептуальных и стратегических подходов формированияв соответствующей среды на основе исследования научно-практических и теоретико-методологических вопросов, касающихся венчурного предпринимательства в Армении.

В диссертации был исследован ряд научно-практических и теоретико-методологических вопросов, касающихся инновационной деятельности, венчурного предпринимательства и предпринимательской деятельности, были проанализированы перспективы развития венчурного предпринимательства в Армении, государственная политика, проводившаяся в данном направлении, программные документы и правовые основы регулирования инноваций и данного вида предпринимательства, а также были разработаны конкретные мероприятия, направленные на развитие венчурного бизнеса в Армении.

В результате проведенных в диссертации исследований и анализов были получены результаты, имеющиетеоретичекое, методологическое и практическое значение. Из них можно выделить следующие положения,являющиеся основными и отражающими научную новизнуработы:

- На основе иностранного опыта в сфере венчурного предпринимательства и исходя из особенностей Республики Армении были разработаны обобщенные принципы и стандарты оценки исследования иннованционных проектов в Армении и их эффективность, позволяющие раскрыть предпочитаемые варианты инвестируемых программ инновационного характера.
- Были разработаны концептуальные и стратегические подходы венчурной инвестиционной политики с целью раскрытия основных целей и вопросов, касающихся венчурного предпринимательства, обеспечения предпоссылок и необходимых условий для эффективной деятельности данной системы, создания венчурных инвестиционных действенных механизмов, а также с целью решения исходных направлений структурных составляющих данной системы и их деятельности.
- Были разработаны конкретные предложения для внесения изменений и дополнений в законы РА “О государственной поддержке венчурному предпринимательству”, “О налоге на прибыль”, “О свободных экономических зонах”, а также в ряд других законов РА с целью усовершенствования законодательного регулирования венчурного предпринимательства и инновационной деятельности.
- Были предложены конкретные мероприятия, направленные на формирование благоприятного макроэкономического поля и обеспечение системности деятельности смежных сфер венчурного предпринимательства, на повышение эффективности проводимых в данной сфере функций, а также создание информационной сети, с целью формирования государственной системы венчурного предпринимательства в республике и усовершенствования предпринимательской и инвестиционннойсфер в Армении.

NAREK SARGIS KHACHATRYAN

"WAYS OF DEVELOPMENT OF VENTURE ENTREPRENEURSHIP IN RA"

The Dissertation is sumbitted for the pursuing of the Scientifie Degree of the Doctor of Economics in the Fielf of "Economics, Management of economy and its Sectors". 08.00.02

The defense of the dissertation willl take place at 15.00 on December 27, 2013, at the meeting of Specialized Council 015 of the Supreme Certifing Committee of the Republic of Armenia acting at theYerevan State University,

Adress: 52 Abovyan Str., Yerevan, 0009, Armenia

ABSTRACT

The given thesis is dedicated to the study of the issues of the development of venture entrepreneurship in Armenia and the elaboration of approaches directed at their solution. The venture entrepreneurship, being one of the types of entrepreneur activities, has great importance in the system of contemporary market relations and occupies its special place in the economic systems of not only developed, but also developing countries. This type of entrepreneurship can become for Armenia the most important factor of economic development, the restoration of industrial potential of the republic, the stimulation of scientific-technical progress, as well as the introduction of their results in the economy.

The main purpose of the thesis is the elaboration of concrete arrangements and conceptual and strategic approaches to the formation of corresponding environment on the basis of the study of theoretical-methodological and scientific-practical issues of the venture entrepreneurshipin Armenia.

A number of theoretical-methodological and scientific-practical issues related to entrepreneur activities, venture entrepreneurship and innovation activities have been studied in the thesis, the prospects of the development of the venture entrepreneurship in the RA, the state policies conducted in this direction and program documens and legal bases of the regulation of such an entrepreneurship have been analyzed in the work, as well as the concrete arrangements directed at the development of venture business in Armenia have been elaborated in the thesis.

A number of results of theoretical, methodological and practical importance were received as a result of the studies and analyzes conducted in the thesis, among them the following can be consideredas the main provisions reflecting the scientific innovation of the work:

- Being based on the foreign experience available in the venture entrepreneurship and proceeding from the peculiarities of the Republic of Armenia, the principles and standards of the examiantion of the innovation projects in Armenia and the assessment of their effectiveness have been elaborated in the work, they give an opportunity to expose the preffered variants of the investment programs of an innovation character.
- The conceptual and strategic approaches to the venture investment policies have been elaborated in the work with the purpose of the exposure of main goals and issues of venture entrepreneurship, the provision of necessary conditions and preconditions for the effective activities of this system, the creation of the venture investment effective mechanisms, as well as with the purpose of the decision of structural elements of this system and the principal directions of their activities.
- Concrete suggestions have been elaborated for the introduction of amendments into the RA laws “On State Support to Venture Entrepreneurship”, “On Profit Tax”, “On Free Economic Zones”, as well as into a number of other laws with the purpose of the improvement of the legislative regulation of the venture entrepreneurship and innovation activities.
- Concrete arrangements directed at the creation of information networks supposed by such an entrepreneurship, the increase of the effectiveness of the functions conducted in the sphere, the provision of the systematic nature of the activities of the adjacent spheres of the venture entrepreneurship and the formation of the macroeconomic favorable field have been suggested with the purpose of the formation of the state systsem of venture entrepreneurship development in the republic and the improvement of the business and investment environments in Armenia.